ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/95

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.06.2019թ. թիվ /26/10185-2019 գրությամբ «Այթիռեսուրսիս» և «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Սոցիալական ապահովության ծառայության 12.06.2019թ. թիվ 02/14-5/13318-2019 գրության հիման վրա, 19.06.2019թ. թիվ /26/10185-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Այթիռեսուրսիս» և «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊ ընկերություններին (հետայսու նաև՝ Կոնսորցիում) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Այթիռեսուրսիս» և «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊ ընկերությունների ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Այթիռեսուրսիս» և «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊ ընկերությունների կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Կոնսորցիումը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/95 ընթացակարգի շրջանակներում 27.06.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը:

3. Սոցիալական ապահովության ծառայության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

Սոցիալական ապահովության ծառայությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.06.2019թ. թիվ 02/14-5/13318-2019 գրությամբ հայտնել է, որ 2019 թվականի մարտի 7-ին Սոցիալական ապահովության ծառայության կողմից հայտարարվել է Սոցիալական ապահովության ծառայության կարիքների համար ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների գնման ընթացակարգ «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով:

Գնման ընթացակարգի շրջանակում հայտեր են ներկայացրել թվով երեք ընկերություն՝ այդ թվում «Այթիռեսուրսիս» և «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը և գնահատող հանձնաժողովի որոշմամբ Կոնսորցիումը ճանաչվել է առաջին տեղը զբաղեցնող մասնակից:

Գնահատող հանձնաժողովի 2019թ. հունիսի 3-ի նիստի որոշմամբ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի և «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊԸ-ի կոնսորցիումի կողմից ներկայացրած հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է Ընկերության հայտը «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը գնահատելու համար ներկայացրած փաստաթղթերը հրավերով սահմանված պահանջներին չբավարարելու հիմնավորմամբ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/95 ընթացակարգի շրջանակներում 27.06.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/95 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/95 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.Սոցիալական ապահովության ծառայության կողմից Սոցիալական ապահովության ծառայության կարիքների համար ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Այթիռեսուրսիս» և «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.03.2019թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Այթիռեսուրսիս» և «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հանձնաժողովի 29.05.2019թ. ժամը 16:30-ի նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ Կոնսորցիումի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար ներկայացված համանման պայմանագրերում արձանագրվել են անհամապատասխանութ-յուններ:

Ընկերությունը Կարգի 47-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունները շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.06.2019թ. ժամը 16:30-ի նիստի թիվ 9 արձանագրությամբ կայացված որոշմամբ Կոնսորցիումի հայտը մերժվել է՝

«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին չհամապատասխանելու հիմքով:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.06.2019թ. թիվ /26/10185-2019 գրությունը, Սոցիալական ապահովության ծառայության 12.06.2019թ. թիվ 02/14-5/13318-2019 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով

նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3) ....

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Սոցիալական ապահովության ծառայության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Այթիռեսուրսիս» և «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հանձնաժողովի 15.03.2019թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Այթիռեսուրսիս» և «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հանձնաժողովի 29.05.2019թ. ժամը 16:30-ի նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ Կոնսորցիումի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար ներկայացված համանման պայմանագրերում արձանագրվել են անհամապատասխանություններ.

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Կոնսորցիումին շտկել անհամապատասխանությունները՝ ներկայացնել պայմանագրի կատարման վերաբերյալ 2018թ. հունիս-հոկտեմբեր ամիսների հաշիվ-ապրանքագրերի պատճենները, «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը գնահատելու համար

նախկինում կատարված պայմանագրի 2.1.2 կետով սահմանված ամբողջական համակարգի ստեղծման աշխատանքների կատարումը հավաստող ակտերի՝ պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող 9.3 և 9.4 կետերով սահմանված հավելվածներին համապատասխան համակարգի ստեղծման աշխատանքների հանձնումը հիմնավորող փաստաթղթերը: Բոլոր փաստաթղթերը՝ այդ թվում համանման պայմանագրի պատճենն անհրաժեշտ է ներկայացնել հրավերի 7.19 կետով սահմանված պահանջներին համապատասխան հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.06.2019թ. ժամը 16:30-ի նիստի թիվ 9 արձանագրությամբ կայացված որոշմամբ Կոնսորցիումի հայտը մերժվել հետևյալ հիմնավորմամբ.

«Կոնսորցիումի կողմից ներկայացված փաստաթղթերում կան պայմանագրի կատարումն իրականացված լինելու վերաբերյալ իրարամերժ փաստաթղթեր, մասնավորապես՝ պայմանագրի կատարման մասին ներկայացված տեղեկանքով հավաստվում է այն փաստը, որ 24.08.2017թ. Պիվվիտ կորպ.-ի և «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊԸ-ի միջև անժամկետ կնքված «Համակարգի ստեղծման» թիվ 0240817 պայմանագրի շրջանակներում պատշաճ ձևով իրականացվել է պայմանագրով նախատեսված պարտավորությունները, ծառայությունները մատուցվել են բարձր որակով և ժամանակին:

Համաձայն պայմանագրի 4.1 կետի՝ պայմանագիրն ուժի մեջ է մտնում ծառայությունների մատուցումը սկսելու օրվանից՝ 01.09.2017թ. և կգործի մինչև ծառայությունների մատուցման ավարտը, եթե այն վաղաժամկետ չի դադարեցվում համաձայն 9-րդ կետի:

Վերոհիշյալի լույսի ներքո պարզվում է, որ համաձայն ներկայացված տեղեկանքի՝ պայմանագրում նախատեսված պարտականությունները կատարված են ողջ ծավալով, ծառայությունները մատուցված բարձր որակով և ժամանակին, իսկ միևնույն ժամանակ չի ներկայացվել պայմանագրի 9.4 կետով սահմանված՝ պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված թիվ 2-ը, ինչը կասկածելի է տեղեկանքի առկայության պարագայում:

Ի պատասխան 29.05.2019թ. հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանություններ8ը շտկելու վերաբերյալ առաջարկությանը՝ կողմը ներկայացրել է գրություն առ այն, որ պայմանագիրը կնքվել է անժամկետ, ուստի

հնարավոր չէ ունենալ պայմանագրի անբաժանելի մասը կազմող 9.4 կետով սահմանված N 2 հավելվածը»:

Գնահատող հանձնաժողովը Կոնսորցիումի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար ներկայացված փաստաթղթերը համարել է իրարամերժ, որը հավաստում է, որ պայմանագրով սահմանված համակարգի ստեղծման աշխատանքներն ավարտված չէ, ինչը չի համապատասխանում հրավերի 2.5 կետի 1-ին մասի «ա» պարբերությամբ սահմանված պահանջներին՝ մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.4 ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող մասնագիտական փորձառություն:

Նույն կետի 2.5 ենթակետով սահմանվել է, որ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ

պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում ավտոմատացված որոշումներ կայացնող համակարգի մշակման/ներդրման և(կամ) սպասարկման ծառայությունների մատուցված լինելը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

«Այթիռեսուրսիս» և «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊ ընկերությունների միջև 11.03.2019թ. կնքված թիվ 19/1 համատեղ գործունեության պայմանագրի 2-րդ կետի համաձայն՝ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ն ստանձնել է «Տեխնիկական միջոցներ» և «Աշխատանքային ռեսուրսներ», իսկ «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊԸ-ն՝ **«Մասնագիտական փորձառություն»** և «Ֆինանսնական միջոցներ» որակավորման չափանիշները ներկայացնելու պարտականությունը:

Կոնսորցիումի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար որպես շտկված փաստաթուղթ ներկայացվել է՝ «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊԸ-ի և Պիվվիտ կորպ.-ի միջև 24.08.2017թ. կնքված համակարգի ստեղծման 0240817 պայմանագիրը (հետայսու՝ Պայմանագիր), որի համաձայն կատարողը («Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊԸ) պարտավորվել է պատվիրատուի հանձնարարությամբ ստեղծել վեբ կայք և առընթեր աշխատող հավելվածներ Android և IOS համակարգերի համար մեկ բառով ասված համակարգ և տեղադրել այն պատվիրատուի հետ համաձայնեցված և վարձակալած հոսթինգում:

Պայմանագրի 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների արժեքը մեկ ամսվա համար կազմում է 2 485 ԱՄՆ դոլար:

Նույն պայմանագրի 4-րդ կետի 4.1 ենթակետի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մտնում ծառայությունների մատուցումը սկսելու օրվանից 01.09.2017թ. և կգործի մինչև ծառայությունների մատուցման ավարտը, եթե վաղաժամկետ չի դադարեցվում համաձայն 9-րդ կետի:

Կոնսորցիումի կողմից Պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար ներկայացվել է Պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստում՝ տեղեկանքի ձևով, համաձայն որի «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊԸ-ն պատշաճ ձևով իրականացրել է վերոհիշյալ պայմանագրով նախատեսված պարտավորությունները, ծառայությունները մատուցվել է բարձր որակով և ժամանակին:

Միևնույն ժամանակ Պայմանագրի 9-րդ կետի 9.4 ենթակետով սահմանված է, որ համակարգի ստեղծման աշխատանքների վերջնական հանձնումն ու համակարգի շահագործումն ապահովող տվյալների փոխանցումն իրականացվում է 2-րդ հավելվածով սահմանված ձևով:

Արձանագրում եմ, որ Կոնսորցիումի կողմից գնահատող հանձնաժողովին չի ներկայացվել նշված Պայմանագրով նախատեսված աշխատանքների վերջնական հանձնումն ու համակարգի շահագործումն ապահովող տվյալների փոխանցումը հավաստող թիվ 2 հավելվածը: Մինչդեռ նշված հավելվածի առկայության պայմաններում միայն հնարավոր է գնահատել մասնակցի կողմից Պայմանագրի պատշաճ կատարումը, քանի որ այն կհավաստեր «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով

նախատեսված՝ համակարգը ստեղծելու և ներդնելու պարտականության իրականացման փաստը, ինչն էլ անհրաժեշտ է հրավերով նախատեսված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը գնահատելու համար:

Նման պայմաններում գտնում եմ, որ Կոնսորցիումի կողմից ներկայացված տեղեկանքը չի կարող դիտարկվել որպես «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի պատշաճ կատարումը հավաստելու համար բավարար ապացույց, քանի որ Պայմանագրի 9-րդ կետի 9.4 ենթակետը հստակ սահմանում է այն փաստաթուղթը, որը հավաստում է Պայմանագրով նախատեսված պարտականությունների ամբողջությամբ և վերջնական կատարումը, որը սակայն Կոնսորցիումի կողմից չի ներկայացվել:

Այսպիսով՝ Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կոնսորցիումը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում են առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել

որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը, մինչդեռ Կոնսորցիումի կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, հետևաբար Կոնսորցիումի կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը բավարարելու մասով ներկայացված հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող:

Այսպիսով՝ «Այթիռեսուրսիս» և «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊ ընկերությունների միջև 11.03.2019թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի 2-րդ կետի համաձայն՝ **«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը ներկայացնելու պարտականությունը ստանձնում է «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊԸ-ն:**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով: Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները.

3) մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 7-րդ ենթակետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

ա. հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիրը,

բ. հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի այդ պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ համաձայն «Այթիռեսուրսիս» և «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊ ընկերությունների միջև կնքված համատեղ գործունեության պայմանագրի՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը ներկայացնելու պարտավորությունը դրված է եղել «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊԸ-ի վրա, ուստի «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊԸ-ն «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում խախտել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորություն, հետևաբար առկա են «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ինչ վերաբերում է «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին, ապա գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն, քանի որ Կոնսորցիումի պայմանագրի համաձայն՝ մասնագիտական փորձառություն ներդնելու պարտավորությունը դրված է եղել միայն «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊԸ-ի վրա:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.06.2019թ. թիվ /26/10185-2019 գրությամբ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:
2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.06.2019թ. թիվ /26/10185-2019 գրությամբ «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊԸ-ին ընդգրկել

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**